Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Երևան

25 ապրիլի 2024 թ.

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Հովհաննեսի Մուրադյանի

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 17.04.2024 թ. ներկայացված զեկուցագրի «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

<u>Գնահատող հանձնաժողովի քարտուղարի ներկայացրած փաստերը և պահանջները.</u>

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանին (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար) ուղղված 17.03.2024 թ. զեկուցագրով հայտնել է հետևյալը.

15.04.2024 թ. կայացել է ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-24/5 գնման ընթացակարգը, որը նախատեսում էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կարիքների համար ձեռք բերել լամպեր և լուսավորող սարքեր:

Ընթացակարգի հանձնաժողովի ներկայությամբ բացվել են բոլոր ծրարները և արձանագրվել, որ «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծրարում բացակայում է հրավերով նախատեսված փաստաթղթերից մեկը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի Հավելված 1.1-ը:

Համաձայն հրավերի 8.8 կետի՝ մասնակցին ուղարկվել է ծանուցում և առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը, այսինքն՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում լրացնել Հավելված 1.1-ը:

«Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել պահանջված փաստաթուղթը և հանձնաժողովը հայտը գնահատել է անբավարար ու մերժել է:

Հաղթող է ճանաչվել հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցը:

Հաշվի առնելով ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով հրավերի 8.13 կետի պահանջները՝ խնդրում եմ Ձեր գրավոր հանձնարարականը համապատասխան ծառայությանը՝ «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի նկատմամբ հետագա գործընթաց սկսելու վերաբերյալ:

<u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար 2024 թվականի ապրիլի 9-ին հայտարարված լամպերի և լուսավորող սարքերի (այսուհետ՝ Ապրանք) ձեռքբերման ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման մրցույթի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայցրել նաև «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ն:

15.04.2024 թ. գնանշման բացման նիստի ընթացքում Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրել է հայտերով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում՝ առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և արձանագրել, որ «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված ծրարում բացակայում է հրավերով նախատեսված փաստաթղթերից մեկը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի Հավելված 1.1-ը:

15.04.2024 թ. Գնահատող Հանձնաժողովը որոշել է բացման նիստը դադարեցնել և առաջարկել «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ին ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի Հավելված 1.1-ը:

15.04.2024 թ. «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ին ծանուցվել է ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի Հավելված 1.1-ը 1 աշխատանքային օրվա ընթացքում /հիմք ՀՀ կառավարության 18.05.2017 թ. 526-ն որոշման 41-րդ կետ/:

2024 թվականի ապրիլի 16-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 15 ապրիլի 2024 թ. 14:30-ին հրավիրված նիստում «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ին առաջարկվել է ներկայացնել հրավերով նախատեսված փաստաթղթերից Հավելված 1.1-ը, որը բացակայում էր ներկայացված փաթեթում: «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի կողմից նշված ժամկետում չի ներկայացվել պահանջված փաստաթուղթը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշել է բոլոր մասնակիցների հայտերը գնահատել բավարար՝ բացառությամբ «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի հայտի /հիմք ՀՀ կառավարության 18.05.2017 թ. 526-ն որոշման 42-րդ կետ/:

<u>Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը</u>:

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Հովհաննեսի Մուրադյանս, ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից»:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով»:

Կարգի 41-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Կարգի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է»:

Այսպիսով՝

«Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի կողմից «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար 09.04.2024 թ. հայտարարված մրցույթին ներկայացվել է մասնակցության հայտ:

«Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի կողմից մասնակցության հայտի գնահատման արդյունքում հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ:

Գնահատող Հանձնաժողովը 15.04.2024 թ. նիստը դադարեցրել է մեկ աշխատանքային օրով և նույն օրը դրա մասին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ին՝ առաջարկելով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի Հավելված 1.1-ը:

«Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ն չի ներկայացրել պահանջվող ապրանքի ամբողջական նկարագրի Հավելված 1.1-ը:

Ուսումնասիրելով ներկայացված հմնքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Որոշումը և կից փաստաթղթերն ուղարկել լիազոր մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Դանիել Ասատրյան» Ա/Ձ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Պետ,
ոստիկանության գնդապետ՝ **Մ.Մուրադյան**